դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության ժողովին.

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

է/ վարել իր անդամների հաշվառումը.

ը/առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացույցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալներ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

7.2Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պատճառաբանված պահանջով՝ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

7.3 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխումը.

բ/ Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, կազմի փոփոխումը.

գ/ Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.

դ/ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.4 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների, կամ պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5 Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամանակով:

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պահանջով:

7.6 Խորհուրդը՝

ա/ հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը.

բ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

գ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից.

դ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

է/ ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը.